# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/11/2022

## ՈՐՈՇՈՒՄ N 155-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 79-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, 37-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 1747-Ա որոշումը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 7-ի «Գորիս համայնքի վարչական սահմաններում, Ներքին Խնձորեսկ գյուղում գտնվող, քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասը, Գորիս համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի հետ փոխանակելու և փոխանակված հողատարածքը «Հայաստան» համահայկական հիմնադրամին անհատույց օգտագործման տրամադրելու մասին» թիվ 79-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրից հանել «և փոխանակված հողատարածքը «Հայաստան» համահայկական հիմնադրամին անհատույց օգտագործման տրամադրելու» բառերը:

2)նախաբանից հանել «75-րդ հոդված 1-ին մասի 2-րդ կետով,» և ««Հայաստան» համահայկական հիմնադրամի առաջարկությունը» բառերը:

3)Ուժը կորցրած ճանաչել որոշման 7-րդ կետը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ

ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ

ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՄԱՇՈՒՐՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ

ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՏՈՌՈՂՅԱՆ ԱՐՏԱԿ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԳԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2022թ. նոյեմբերի «29»
ք.Գորիս